

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
АКАДЕМИЯ НАУК АРМЕНИИ

Պատմա-բանասիրական
ՀԱՆԴԵՍ
ИСТОРИКО-ФИЛОЛОГИЧЕСКИЙ ЖУРНАЛ

1 (134)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ИЗДАТЕЛЬСТВО АКАДЕМИИ НАУК АРМЕНИИ

ՀԱՅՈՒՑ ԾՇԱԿԱՆ, ԼՈՒՍԱՎՈՐ ԿԱՆԹԵՂ ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՍԿԶՐՆԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄՓԻՆ

ՌՈՒԲԻՆԱ ՓԻՐՈՒՄՅԱՆ (ԱՄՆ)

Իթթիհատի կողմից կազմակերպված ջարդն ու տեղահանությունը, փանթուրանիզմի իրագործման ճամփին ի գործ դրված հայ ժողովրդի ցեղասպանությունը ավելին էր քան արյուն, ավեր ու աղետ, որի զուգահեռները կարելի է գտնել նաև ուրիշ ժողովուրդների պատմության մեջ: Հայոց ցեղասպանությունը վախճան էր ենթադրում, վախճան երեք հազար տարիների հայրենիք-հայ ժողովուրդ բնական հասկացողության, որ պարտադրվեց պատմական Հայաստանի մի հսկա հատվածի հայազրկումով:

1915-ի ցեղասպանությամբ վերջ գտան իր հարազատ հողի մեջ արմատ նետած հայ ժողովրդի հոգևոր կյանքի բնական ընձյուղումները: Պոլիսը, թեկուզ հայրենիքից դուրս, բայց Հայաստան երկրի շունչով ապրող հայ մտքի ու լուսավորության կենտրոնը, իր հոգեվարքը ապրեց 1915—1918-ին. գինադադարից հետո վերակենդանացավ, ունեցավ իր վերելքը և ապագայի փայլուն տեսլականը՝ Հակոբ Օշականի, Մատթեոս Զարիֆյանի, Վահան Թեքեյանի «Բարձրավանքը» վկա: Քեմալական հալածանքները այդ վերհանումն էլ խեղդեցին: Հայր վերջնականապես ցրվեց աշխարհով, Միջին Արևելքից մինչև Նվրոպա ու Ամերիկա, ու միացավ արդեն կազմված գաղութներին կամ նոր գաղթօջախներ կազմեց: Սփյուռքը իբրև վայր և իբրև հղացք նոր իմաստներ ստացավ, դարձավ աշխարհայացք, մտայնություն ու ապրելակերպ: Հայ մտավորականությունը շփոթության, անորոշության ու հուսախաբության մատնված փորձեց նոր իմաստ տալ աքսորյալի իր կյանքին, գտնել նպատակը հայրենիքից դուրս աշխարհացրիվ հայ ժողովրդի գոյատևման. վերջին հաշվով փորձեց գտնել մի նոր ուղղություն հայ մշակույթի և մանավանդ գրականության համար:

Հակոբ Օշականը՝ գրականագետ, գրաքննադատ ու վիպագիր, մեկն էր այն մտավորականներից, որոնք ապրեցին Սփյուռքի տագնապը և իրենց անփոխարինելի ներդրումն ունեցան սփյուռքահայ գրականության սկզբնավորման և զարգացման մեջ: Հոգվածիս մեջ, հենվելով Հակոբ Օշականի գրականության վրա (գեղարվեստական գրականություն և գրաքննադատություն), նրա տեսակետները բացահայտելով, պիտի փորձեմ քննարկել ետեղեռնյան սփյուռքի գրականության յուրահատուկ հարցերն ու որդեգրած ուղղությունը: Ներկա ուսումնասիրությանս ընթացքին երեք մեծ գրականագետների դրածերը Օշականի մասին լուսաբանել են ինձ անհայտ կետեր կամ նոր ուղիներ են բացել իմ առջև. շնորհակալություններս Մարկ Նշանյանին, Գրիգոր Պրտեյանին և Վահան Օշականին:

Հետեղեռնյան սփյուռք: Սփյուռքը նոր հղացք չէր: Շատ հայ գրողներ ու բանաստեղծներ հայրենիքից դուրս գրականություն էին ստեղծել: 1890-ականների Նվրոպայում էր, որ Սուրեն Պարթևյանը ականատեսի զգայնությամբ ստեղծագործեց հայ գաղթականության ֆիզիկական և հոգեկան «քայքայում»-ը. Սիամանթոն եղերերգեց «Կոտորած»-ը իր ցեղի, Վահան Թեքեյանը փառաբանեց «Հրաշալի հարություն»-ը իր ժողովրդի: 1890-ական-

ներին արգելափակված ու հալածված Հայաստանից կտրված՝ Պոլիսն էլ էր Սփյուռք, ուր Զապել Եսայանի «Հոգիս աքսորյալ»-ը հուսահատորեն փնտրում էր նպաստավոր այն միջավայրը, ուր թոիչք պիտի առնեն նրա ստեղծագործ հոգին, միջավայր, որ միայն հայրենիքի հավաքական կյանքը կարող էր ստեղծել: Բոլոր դեպքերում էլ հայ արվեստագետը շարունակեց ստեղծագործել Սփյուռքում՝ թեկուզ հեռվից գուրգուրալով իր հայրենիքի ու այնտեղ տառապող բայց հարատևող իր ցեղի վրա:

Վերապրող գաղթականների հոգու մեջ վառված գոյատևման պայքարի, իբրև մարդ և իբրև ազգություն հարատևելու վճռականության բոցերից հառնեց մի նոր հղացք, որ ենթադրում էր նոր միջավայր, նոր աշխարհայացք, նոր իմաստներ ու նոր կառույց: Ինչպե՞ս էր բացատրում Օշականը այս նոր երևույթը՝ իբրև գրական միջավայր:

Սփյուռքի հղացքը Օշականի գործերում: Օշականը դիտում է գրականությունը իբրև արտադրություն ընկերային, քաղաքական և մշակութային ազդակների ներգործման, արվեստագետի յուրահատուկ անհատականության և ստեղծագործ մտքի վրա: Վահան Թեքեյանի առիթով գրված «Սփյուռքը և իրավ բանաստեղծությունը» գործի մեջ Օշականը պարզում է այն պայմանները, որոնք պիտի նպաստեն գրականության աճումին. «կազմակերպյալ ընկերություն, իմացական դարձյալ կազմակերպյալ բարեխառնություն, հավատալիք կրթանք, մտատիպար ու տաղանապներ, զաղափարաբանություններ ու սերունդ»¹: Նա վկայում է, թե այդ գործոնները ներկա էին 1850-ից մինչև 1915 և ապահովում էին արևմտահայ գրականության բնական աճն ու զարգացումը ու շարունակում է՝ «Սփյուռքը թեև կկարծե շարունակել սըրբազան ավանդությունը, կպատկանի ուրիշ, չըսելու համար հակամարտ բարեխառնության մը»: 1945-ին արտահայտած այս մտքերը զուգահեռներ են 1914-ին «Մեհյան» հանդեսի առաջին համարի առաջին էջում տեղ գրված «Մեհյան» խմբակցության հանդանակի մեջ արտահայտված գաղափարների: Նախապատերազմյան օրերին էլ մտասեփածումի նյութ էր հայ գրականության կենսանորոգումը, նրա ձերբազատումը օտար ազդեցությունից և Հայ Հոգու իրականացումը նրա մեջ: Ուրեմն Օշականը երեսուն տարիներ հետո, և մանավանդ հետեղենոյան սփյուռքի իրականության մեջ, դեռ շարունակում էր հավատալ, թե օտար ազդեցությունների տակ Հայ Հոգին պիտի մեռնի հայոց գրականության մեջ, իսկ սփյուռքում այնքան տարազան ու առատ էին այդ ազդեցությունները: Օշականը տեսնում էր, թե ինչպե՞ս նախաեղենոյան գրական միջավայրը իր հակաթեզն էր գտել հետեղենոյան միջավայրի մեջ, հավաքական կյանքը՝ սփռումի էր վերածվել:

Եվ Սփյուռքը իբրև գրական միջավայր, հանելուկային բարդ կառույցի պես, աստիճանաբար տարրալուծվում և բացահայտվում է Օշականի գրականության ընդմիջից, մտքերը ցրված ամեն տեղ՝ երբեմն բոլորովին անսպասելի, հաստատումներ, ծանոթագրություններ, երկար փակագրծներ առերեւոյթ անկապակից մի նյութի մեջ բացված: Անդրանիկ Մատուկյանի «Թուղթ առ Երևան» բանաստեղծության առիթով գրված «Վկայություն մը» աշխատության մեջ այդպիսի մի հաստատումի ենք հանդիպում. «Սփյուռքը աղետն է անշուշտ երկարաձգված բայց անկե տարբեր. ավելի է բանով մը, որ դյու-

¹ Հ ա կ ո Ր Օ շ ա կ ա ն. Սփյուռքը և իրավ բանաստեղծությունը. Երուսաղեմ, 1945, էջ 2—3:

² «Մեհյան», Պոլիս, 1 հունվար 1914: «Մեհյանը», որ բառացիորեն հեթանոս տաճար է նշանակում, դառնում է պաշտոնաթերթը մի խումբ հայ երիտասարդ գրողների և բանաստեղծների՝ Կոստան Զարյան, Դանիել Վարուժան, Ահարոն, Գեղամ Բարսեղյան, Հակոբ Քյուֆեճյան (Օշական), որոնք փորձում էին հայ հոգու խորքերը պեղել, մինչև հայ հեթանոս անցյալը երթալ ու այդ մաքուր ակունքներից ներշնչված տալ հայոց գրականության նոր ուղղություն ու նոր վերածնունդ: 1915-ի եղեմը ընդհատեց նաև այդ շարժումը:

րավ չի բացատրվիր: 1920-ին մեր երիտասարդությունը գրական ճակատի մեջ միություն մըն էր Պոլիս: 1930-ին, այսինքն սփյուռքի սկզբնավորութեան, այդ ճակատը ոչ միայն քայքայված է, այլ այդ երիտասարդությունը պատենշներու ետեւն կհարվածե աջ ու ձախ, իր երեկվան պայքարի ընկերը, իր տասը տարի առաջվան ուսուցիչները, իր մանկության ժամանակ իր ժողովուրդին գրական սպասը ընող գրագետները: Այս է ահա Սփյուռքը (ընդգծումները միշտ հեղինակինն են—Լ. Փ.)³:

Արդարեւ, 1920-ից 1930-ին հայ ժողովրդի սփռումը իրագործված էր. Սփյուռքը իրականություն էր այլևս: Ցեղասպանության ազդեցությունը՝ շոշափելի ու ճանաչելի առկայություն, աշխարհընկալման ելակետ: Եվ դեռ ավելին, արմատավորվում էր հարազատ երկրից շարտված ու ազատությունից զրկված լինելու մտայնությունը: Տասնամյակների հույսերը, իդեալական ձգտումները ջախջախվել էին, ազատագրական զինյալ ու գաղափարական պայքարը՝ ձախողանքի մատնվել: Արդյունքը, այսինքն հիմնաքարը Սփյուռքի սկզբնավորման, սև հուսահատություն էր քանդող, քայքայող հոռետեսություն: Օշականը այսպես է բնութագրում տագնապը. «Այնքան մոտիկ ազատության, զայն շոշափելի վերջ նույնիսկ, մենք մեզ կգտնենք, նեւթած շորս հովերուն, մեր երկրեն, մեր բարեկամներեն ու սատկելու համար ամայք հանված գրաստներու պատկերին տակ... Մեր բնաջնջումը, մեր մեջը, մեզմով, առանց բանակի ու առանց հրդեհի, մեր հոգիին մեջ ներարկելով թույններ մեզ մեզմե զանելի դարձնող...»⁴:

Եվ այս արգաստեղի իրավիճակում տարօրինակ չի, եթե «դուք ունիք ընկերը անարգողը, իր մեծերը ուրացողը, իր քրածը խորանարդողը, իր շքրածը ծախողը, բոլորն ալ մեկնած մեկ ու նույն հատակեն զոր Սփյուռքը դանդաղ ծորումներով նետեր էր անոնց աղտեն, տառապանքեն բզիկ բզիկ հոգիին խորունկին»⁵: Եվ միթե ովքե՞ր էին Սփյուռքի այդ նոր բնակիչները. շարդ ու կոտորած տեսած, անապատներից անցած, որբանոցների մեջ հասակ նետած: Սրանք էին, որ «որբանոցներեն արձակվեցան ուղղակի կյանքի շահաստանները, անգամ մըն ալ որբանալու կյանքին մեծ զրկանքներուն մեջ... Ասոնք կկազմեն Սփյուռքին ամենեն իրավ մթերքը»⁶: Ահա ախտաճանաչումը Սփյուռքի իրագրության, բնութագրումը Սփյուռքի հավաքական հոգեբանության, տիպաբանությունը արմատախիլ ու գաղթական, ազգային, հավաքական աղետ ապրած մի ժողովրդի:

Հայ ազգը մահանում էր Սփյուռքում. իսկ ի՞նչ էր Խորհրդային Հայաստանի հակազդեցությունը: Թշնամություն և անհանդուրժողականություն հանդեպ այն մտավորականության, որ փորձում էր իր հոգու կայծերով օջախը վառ պահել: Իր գաղափարի, իր արտահայտած մտքերի և երբեմն էլ անհեթեթ քննադատությունների համար, Օշականը Խորհրդահայ մտավորականության կողմից միշտ քննադատության թիրախ է եղել: Անհանդուրժողականություն՝ երկուստեք: Նշանակալից է նրա մի արտահայտությունը, երեւի վերջինը՝ մահից մի քանի ամիս առաջ, «Նոր Գիր» եռամսյային գրքած մի նամակ-հոգեվածում:

«Ամեն հայ, Հայաստանեն դուրս, զոհ մըն է: Ու ամեն փառձ, մեկ հայ Հայաստանեն դուրս պահելու, ոճիրի մոտ արարք մը, քանի որ դուրս մնացողը սահմանված է կորսվելու մեր ժողովուրդին համար: Ահա իմ զայրույթը Հայաստանի գրողներուն վրա, որոնք հաղթանակին հպարտությանը մեջ պարզելու էին առնվազն մարդկայնություն. մեր դժբախտությունը գրեթե երբեք զիրենք գուժի, կարեկցության ալ չբերեր: Ի՞նչ ըրին: Հունտն իսկ շորքնել սպառնացին: Որո՞նց.—նվազագույն 100 000-նոց զանգվածի մը

³ Հ. Օշական. Վկայություն մը. Հալեպ, 1946, էջ 93:

⁴ Նույն տեղում, էջ 73:

⁵ Նույն տեղում, էջ 36:

⁶ Նույն տեղում:

որոնց մեղքը իրենց ժողովուրդը սիրելն է եղած: Դաշնակ, Հնչակ, Ռամկավար, Համալսարան, պիտակներ են: Բոլորին տակն ալ հայը միշտ հայ է»⁷:

Օշականի նկարագրած Սփյուռքը միշտ սև է ու մթին: Սփյուռքը վայրն է «Օտարացման», «Քաղաքանը մեր հոգիին», «Նսեմաստանը», «Ճյուղախտը մեր հոգիին»⁸: Ցավալի էր կորուստը Հայ Հոգու, որ դեռ 1914-ին մեհյանականները փորձում էին անբախնալ հայ գրականության մեջ: Օշականը հիշում է այդ մեծ խոչանքը իր «Համապատկեր արևմտահայ գրականության» X հատորում:

«Երեսուն տարիներ անցեր են այդ օրերին: Այս ժողովուրդին կեսը չբացած է ոչ միայն խորհուրդին (հեղինակը խորհուրդ բառը գործ է ածում հոգի բառի փոխարեն՝ ըստ իրեն «գիշում մը ըրած ըլլալու համար Կոստան Զարյանին» որ խմբագրում էր «Մեհյանը» — Ռ. Փ.), այլև՝ իր մարմինն: ... Սփյուռքը՝ իր նոր փառասիրություններով, գաղափարագրություններով, կիրքերով կկարծե լուծած ըլլալ այդ խորհուրդը, աղքատանդության միջոցներով (հեղինակը հավանաբար սպանության է ակնարկում — Ռ. Փ.): Կա՞ ավելի տրտում բան իմ տարիքի մարդոց համար, քան պատկերը երիտասարդության մը, ուր մտավորականությունը կպատրաստվի օտարներու մշակութունով, կհպարտանա իր պապերը անարգելու մեծ ծանրակշիռ փաստեր գրտնելով»⁹:

Օշականը միանգամայն չի ժխտում օտար ազդեցությանը գրական կողմերը. վկայելով հայ վեպի 1920-ից 1940-ը ժամանակաշրջանում արձանագրած վերելքին, գրում է. «Մեր վեպը, քսան տարիե առդին ըրած է այլապես մեծ նվաճումներ, որոնք օտար շփումներու, միջավայրերու հարկադրանքը ըլլալուն չափ, մեր կյանքին մեջ մուտ գտած նոր ազդակներում, գրական նոր ձգտումներու փաստեր են»¹⁰: Ինչ վերաբերում է բացասական ազդեցություններին, անգլա դրանք ըստ Օշականի՝ դրսևորվում էին անցյալի ժխտումի և նախորդ սերնդի հայ գրողներին ուրանալու մեջ:

Օշականն ինքն էլ մեկ թիրախն էր երիտասարդ գրողների քննադատության: Դա Օշականին ցավ էր պատճառում, քանի բազմիցս արտահայտվել է այս մասին: «Կրնային չհավնիլ մեզի» գրում է նա: «Ատիկա սրբազան դժգոհությունն է առանց որուն կյանքը կրկնություն կամ նեխում պիտի նշանակեր: Բայց կավելցնեի, — Մի հավնի՛ք ինձ գինեհալ... Զի ինքնաբավությունը գերազանց շարիքն է ստեղծագործության արարքը ներքինացնող»¹¹:

Եվ այս բոլորը Օշականը նկատում էր իբրև հետևանք սփյուռքյան պայմանների: Երիտասարդ գրողների սուր քննադատությունը հնչելին ուղղված, նրանց համարձակ ու բարձրաձայն ժխտումը անցյալի արժեքների, միջոց էր մոտիկ անցյալի աղետալի փորձառությունը մարսելու, դրա թողած մղձավանջային հուշերի հետ հաշտվելու ու ներկայի հետ քայլ պահելու:

Ակնարկելով Զապել Նսայանի «Մուրատի կյանքը» կենսագրության, Օշականը Սփյուռքի գրականության մի ուրիշ երևույթն է համարում ապրուստավորված, ծախու հանված, կամ ձգտումնավոր գրականությունը, ու փորձում է բացատրել թե ինչու է ստեղծվում նման գրականություն:

«1920-են առդին մենք, Սփյուռքի մեջ դադրած էինք ժողովուրդ մը ըլլալն: Հոն երևան ելած գրողները, իրենց շրջանակը տալու հարկադրված, կվերածվին, այդ իսկ ճնշումով, անհատական վկայության: Չունեինք գրա-

⁷ «Օշականի խոսքը մահեն հետո»... տե՛ս «Նոր դիր», Նյու Յորք, թիվ 1 (37), 1948, էջ 11:

⁸ Տե՛ս Գրիգոր Պրլտյան. Հ. Օշական՝ քննադատ. — «Բազին», Պեյրուս, թիվ 3, 1984, էջ 54:

⁹ Հ. Օշական. Համապատկեր արևմտահայ գրականության. հ. X, Անթիլիաս, 1982, էջ 430:

¹⁰ Նույն տեղում, հ. VI, Պեյրուս, 1968, էջ 260:

¹¹ Սփյուռքը և իրավ բանաստեղծությունը, էջ 63:

կանություն մը արդարացնող պայմանները այդ մարդոց հոխն, վրան, ոտքին: Անոնք որ հուշեր գրեցին (Համաստեղ, Օհան Կարո) կծառային մեր բարքերուն բայց ոչ մեր գրականության: Անոնք որ պիտի կրնային մեր գրականության դիմագիծ մը տալ, Շահան Շահնուր, Հ. Զարդարյան, Շ. Նարդունի, այսինքն Փարիզի վավերական տաղանդները, իրենց դժբախտություններեն, օրվան կարիքներեն նվաճված հետզհետե պիտի սպառեին»¹²:

Օշականի բնութագրումը Սփյուռքի գրականության: Հայոց ցեղասպանությունը մահացու հարված հասցրեց արևմտահայ գրականության շենքին: Անհնարին էր իրականությունը անգիտանալ ու փորձել շարունակել հետեղեռնյան գրականության ավանդներով: Ցեղասպանությունը իր ամենալայն առումով վերապրելու համար, պետք էր դիմագրավել Աղետը, ըմբռնել կատարվածը և հաշտության եզր գտնել նրա հետ: Միայն այդ ժամանակ էր, որ գրական ստեղծագործությունը Սփյուռքում կարելի պիտի լիներ: Օշականը, ավելի քան որևէ սփյուռքահայ գրագետ, ցեղասպանությունը դիմագրավելու փորձեր կատարեց. ցեղասպանությունը համարեց մի վախճան, որ ապագա առողջ գրականության ստեղծման ի խնդիր, պետք է որ գիտակցվի ու բացատրվի: Սա է մեկնակետը նրա առաջադրած հղացքների ու տեսությունների: Բայց նախ, երկու բացատրություն:

Օշականը հաճախ արտահայտվել է, թե 1915-ը վախճանն էր արևմտահայ գրականության: Սա չի նշանակում, թե 1915-ից հետո այլևս հնարավոր չի գրականություն ստեղծել: Համաձայն եմ Մարկ Նշանյանի բացատրության, ըստ որի «Հնարավոր չէ գրականություն ստեղծել (faire de la littérature), ըստ որի, որևէ կերպով այդ վախճանի հետ հարաբերության մեջ մտնելու»¹³: Հետո, Օշականի համար ցեղասպանությունը դիմագրավել նաև նշանակում էր թե ինչպես այն գրի առնել, ինչպես սանձել հորձանքը զգացումների, որպեսզի կարելի լինի մարդկային երևակայությունից դուրս այդ պատկերները թղթին հանձնել, լեզվի սահմանների մեջ տեղավորել:

Օշականը շարունակ փորձեր է կատարում, վարկածներ առաջարկում: Նրա համար պարզ խնդիր է՝ նախաեղեռնյան գրական նորմերն ու ավանդույթները օգտագործելի չեն կարող լինել հետեղեռնյան գրականության մեջ: Հայրենի գյուղի հիշողությունները (Համաստեղ կամ Մուշեղ իշխան) Սփյուռքի գրականության չէին պատկանի, եթե գրված լինեին հուզական պաթոսով, կարոտակեզ հառաչանքներով: Օշականը օրինակ է բերում նաև իր տված վիպական պատկերները հայ գյուղի ու հայրենի տան, որոնք ազգագրական արժեք ունեն առանց գրական արժեք լինելուց դադարելու: Նրա կարծիքով հուզականությունը, որ նսեմացնում է գրական գործը, բխում է հայ գրողի ստորադասության բարդույթից դեմ հանդիման օտար միջավայրի անծանոթ իրադրության: Սփյուռքահայ գրողը (վահրամ Սոֆյան, Ալեքսան Գլըճյան) «այս զգայությունները ստորադասումի՝ ջանաց փոխակերպելու ջանքով մը, գրական այն ցավին որ կարոտի կերպարանքը կհաղնի: Ասկե դեպի հայրենաբաղձ բանաստեղծությունը դժվար չէ ձամփան»¹⁴, վիպական (ռոմանտիկ) հուզականությունն ու կարոտագին հառաչանքները ժամանակավորեպ էին անհարազատ՝ աշխարհում տիրող մտայնության և բնագույնված գրական հղացքներին: Տարբեր են ավանդներն ու ուղղությունը նախաեղեռնյան ու հետեղեռնյան գրականության՝ «Փարիզ, Ամերիկա, Նիդերլանդ, կգործածեն Արևմտահայ գրականության գործիքը միայն, բայց կրենեն գրականություն մը որ ոչինչ ունի պոլսական»¹⁵: Այդպես էլ պիտի տարբեր լինեն այդ գրականություններին մոտենալու մեթոդները. «Պատերազ-

¹² Համապատկեր արևմտահայ գրականության. հ. VI, էջ 322:

¹³ Մարկ Նշանյան. Hagop Oshagan. Tel qu'en lui-meme.— „Dissonanze“ № 1, 1984, էջ 68:

¹⁴ Սփյուռքը և իրավ բանաստեղծությունը, էջ 59:

¹⁵ Համապատկեր արևմտահայ գրականության, հ. VI, էջ 260:

մեն վերջ, Սփյուռքի զանազան կեդրոններուն մեջ Արևմտահայ գրականությունը ճիշդ բան չէ տեսնել այն շափերով, հանգանակներով, որոնք իրենց արդարացումը ունին երբ կգործածվին 1850—1914 ժամանակաշրջանին համար, Պոլիս»¹⁶:

Սփյուռքահայ գրականության Օշականի քննադատություններն ու դիտումները, որ միաժամանակ պարզում էին նրա սպասելիքներն ու առաջադրանքները, տեսություններ են սփյուռքահայ գրականության ճամփան լուսավորող: Սփյուռքը սփռում ու տարտղնում է և կենցաղ է բնութագրում. բայց դրանից ավելին, Սփյուռքը մտայնություն է՝ կնիք է գեղարվեստական ստեղծագործության վրա: Այս սփռումի մեջ, գրական բեմի վրա բազմաթիվ են դերակատարները, անհատ մեծությունները. սակայն, դրանք «չեն կրնար տեմպը տալ մեր հավաքական արյունին»¹⁷: Բայց ինչո՞ւ է հավաքական ճիգը անհնարին: Ինչո՞ւ են Սփյուռքի գրական շարժումները ձախողանքի դատապարտված:

«Այսօր ոչ մեկ հեռանկար, ոչ մեկ իտեալ, ոչ մեկ թաքուն կամ հայտ սրբություն կա, որ զորեր իրեն կապված պահել մեր տղոց զգայությունները: ...Նթե ցեղը ապրեցավ ու եկավ մեզի, իր պատրանքին մեծության կամարովն էր որ եկավ: ...Այսօր վերջին պատրանքին ալ փշրումեն հետո, մեր տղաքը օտար ոստաններու, օտար հուզումներու կբանան իրենց ջիղերը: ...Մեր տղաքը իրենց ցեղին չպատկանելի գատ, հագիվ թե կպատկանին իրենց ժամանակին ու նոր միջավայրին: Այսպես՝ քաղաքը և իր անձուկը, օտար երկիրքն ու անոր սառույցը կամ անդամ կրակը տարտամ մուտք կփորձեն քանի մը տղոց մեջ ... Սիրո, ցավի, կարոտի, զգայական հանդգնության, ախտագին սրսփուքի, նոր զգայությանց ետեհն խուլ ու համառ արշավի, լքումի, դառնացումի, անզոր համակերպումի միացումը անխնամ, անտարազ, ապերեսան թեքնիքի մը վրայ,— գրեթե տված եղա մեր նոր քերթողության գլխավոր հատկանիշները»¹⁸:

Այս երկար միջբերումի ընդմիջից մեզ խոսում են Օշականի մտահոգությունները, Սփյուռքի գրականության հարցերը: Հինը մերժված է, բայց նորը ստեղծելու համար հիմնաքար չկա, արմատներ չկան, երազ ու ապագայի տեսլական չկա. կան նոր պատկանելիության զգացումներ, օտար սերեր ու կրքեր, որոնց կենտրոնախույզ զգողության դեմ ծառացող ուժերը աստիճանաբար թուլանում, տեղի են տալիս: Հավաքական ճիգերը գունաթափվում են, անզոր դառնում: Օշականը հավատում էր, որ գրական շարժումները աշխուժություն պիտի բերեին, նոր ուղիներ պիտի բանային. իսկ դրանք ընդհանրապես սկիզբ են առնում մի պարբերաթերթի շուրջ հավաքված մտավորականության հավաքական աշխատանքով: Նա օրինակ է բերում «Մեհյանը» Պոլսում, «Մենքը» Փարիզում և «Ահեկանը» Բեյրութում: Հետեղեռնյան Սփյուռքի պարբերաթերթերը չեն կատարել այդ դերը. գոնե մարմնացնեին դադարի գրական միջավայրը, զարգացնեին ընթերցող հասարակության ճաշակը, ուղղություն տալին արվեստին և վերջապես մշակելին գեղագիտության և գրաքննադատության նոր արժեչափեր: Խոսում է զանազան թերթերի մասին, դրանց մեջ նաև «Նոր գիր» և «Հայրենիք»:

Նյու Յորքում հրատարակվող «Նոր գիր» եռամսյա հանդեսի խմբագրությանը գրած մի նամակում, Օշականը թերթը գտնում է «քիչ մը շատ ընթացիկ և արդիական», որ ինքը համարում է արդյունքը՝ «ամերիկյան մթնոլոր-

¹⁶ Նույն տեղում:

¹⁷ Մայրիներուն շուքին տակ, գրական դրույց Հ. Օշականի հետ. Բ. Թաշլան, Պեյրութ,

100 ամյակի հրատարակություն, թիվ 2, 1983, էջ 49:

¹⁸ Նույն տեղում, էջ 48—49:

տի ճնշումին»¹⁹։ Բոստոնում հրատարակվող «Հայրենիք» ամսագրի պարտականությունն է համարում ամերիկահայության գրական ու գեղագիտական ճաշակը մշակելու նոր գրական ուղիներ ու արժեքներ փնտրել։

Արդարև, 1920-ական և 30-ական թթ. «Հայրենիքի» էջերը լեցուն էին հայ ազատագրական պայքարի, հերոսների ու մեծ դեմքերի սևեռումներով ջարդի ու տեղահանության սարսափների հուշագրություններով։

«Տասնյակ հազարավոր կհաշվվին դեմքերը, որոնք զենք առնել գիտեին ու մեռան առիկա ձեռքերին։ Ի՞նչ է անդրադարձը այս հսկա տաքնապանքին, մեր արվեստին վրա։ Գրեթե ոչինչ։ Ինչ որ իբրև հուշ, օրագրություն, արշիվի տարր իջած է, հանրային սեպհականության պատմական վաստակ մըն է, գրեթե բոլորովին օտար արվեստին։ Ամերիկայի «Հայրենիքը» այդ ուղղությամբ դպրոց է կազմած։ Եվ սակայն այդ նոթերը գրեթե կիսաթափանցիկ իսկ իրողության այլապես ահավոր, մեծ, սրտառու գեղեցկությունը»²⁰։

Եվ իրապես, հետեղեռնյան Սփյուռքի գրականությունն իր սկզբնավորման շրջանին դարձավ մի խառնակ շտեմարան, ուր եկան ամբարվելու, առանց խտրականության և ընտրության, հերոսների չոր ու անարվեստ կենսագրություններով, կամ սուգի, արցունքի, աղիողորմ հառաչանքների պաթոսային զգացումներով զեղուն վկայություններ ու պատմվածքներ, կարծես հաշվեհարդարի նստելու համար հայոց ցեղասպանության սարսափի ու տառապանքի տարիների հետ, պատմության հանձնելու հավիտենականացնելու աճապարանքով դեպքեր ու դեմքեր։ Գուցե դա միակ կարելի ուղղությունն էր աղետ ապրած, գաղթական մի ազգի գրականության։ Բայց ի՞նչ շահեց հայ ազգը։ Այս հարյուրավոր գործերից քանի՞սն են դիմացել ժամանակի դատաստանին։ «Հայրենիքը» կամ Սփյուռքի մյուս հանդեսները, կարող էին բարձր արժեքափերով ղեկավարվել ու նոր գեղարվեստական գրականության արժեքավոր գործեր քաջալերել։ Բայց դրանք տեղի տվեցին, անսացին ընթերցողի միջին ճաշակի բռնության արվեստի վրա։ Ըստ Օշականի, Համաստեղի «Սպիտակ ձիավոր» վեպը վրիպանք էր, «Վասնզի «Հայրենիք» հանդեսին ընթերցողները իրենց աչքը, այսինքն կարդալու ժամանակը ու խելքը, այսինքն հասկնալու կարողությունը պարտադրեցին հայրենակից պատվական պատմողին»²¹։ Եվ դարձյալ՝ «Վրիպեցավ «Մնացորդացը», վասնզի... մեր Սփյուռքը շարժումի հանեց իր մեծատաղանդ ապիմաստությունը»²²։ «Համապատկերի» X հատորում ինքն իրեն և իր գործը քննարկելով գրում է. «Հայրենիք» հանդեսը, անոր մեկ քանի գործերը ընդունելի վերջը, ընթերցողներուն ճնշումին տակ գոցեց իր էջերը անոր երեսին»²³։ Խրմբագրությունը որոշել էր դադարեցնել Օշականի «Մնացորդաց» վեպը. ընթերցողները անդադար գանգատվում էին, թե ոճը բարդ է, անհասկանալի ու երկարաշունչ։ Եվ Օշականը համեմատություն է կատարում հայ և հրեա հասարակության միջև իրենց գրողների հանդեպ ցուցաբերած վերաբերմունքի տեսակետից։ «Մեր գրողները միջազգային հրեությունը չունին իրենց հոտին, իրենց գիրքերը լանսե ընելու համար։ Ավելին, մեր գրողները իրենց այդ փորձին մեջ դիտապաստ փովեցան մեր իսկ հարվածներով»²⁴։

Ընթերցողի կարծիքն ու հակազդումը գրական գործի վրա, որ Հայդեգերի phenomenology տեսության հիմքով գրաքննադատության նոր մոտեցում դարձավ, և որի ենթադրած կրթանքը միտում էր բազմակի մեկնաբան-

¹⁹ Սույն նամակից մեջբերումներ է կատարում «Նոր գիրի» խմբագիր Բենիամին Նուրիկյանը իր «Նոր գիրի» հնգամյակի առթիվ՝ հոգվածում։ Տե՛ս «Նոր գիր», 1944, թիվ 1 (21)» էջ 5։

²⁰ Համապատկեր արևմտահայ գրականության, հ. VI, էջ 321։

²¹ Վկայություն մը, էջ 23։

²² Նույն տեղում, էջ 23։

²³ Համապատկեր արևմտահայ գրականության, հ. VI, էջ 10։

²⁴ Վկայություն մը, էջ 22—23։

նությամբ հարստացնել գրական գործը, սփյուռքահայության մեջ տարբեր նշանակություն ստացավ: Զանազան նկատառումներով, դրանց մեջ նաև նյութական ակնկալություններ, ընթերցողի կարծիքն ուճաշակը չափազանցված ուշադրության արժանացավ, գրականության ուղղության մեջ թելադրող ազդակի վերածվեց: Գեղագիտական քննադատությունը, պղատոնական հրդացքով, առարկայական արժեքի հարց դարձավ: Ընթերցողի նախասիրությունը՝ ամենապարզունակ արտացոլումով ինքն իր կերպարը, իր ցավը, արցունքն ու տառապանքը գրական գործի մեջ գտնելու, գրականությունը միջին մակարդակի իջեցրեց: Օշականը պայքար է մղում մասսայական ճաշակը գրականության արժեչափ համարելու դեմ: «Նդան գրողներ, միշտ պատե՛րազմեն ասդին», գրում է նա, «որոնք իրենց կարգացվելուն փաստը անծակ միամտությամբ մը վերածեցին արժեքի փորձին»²⁵:

Օշականը ցանկանում էր տեսնել Սփյուռքում աճող սերունդներ, «Զոր հորինեին պարզ՝ որքան որակյալ, հանգամանավոր մարդերը, գրող ինչպես ընթերցող, գործող՝ որքան արհեստավոր ... որոնք բոլորը, մեր աղետը ընդունելու, իրենց մտքին պատշաճեցնելու ահավոր պարտքը կատարեին, իրենք իրենց, միայն ու միայն մտիկ ընելով իրենց խղճմտանքին և ոչ թե ասոր անոր ուղածները առնեին մեկնակետ ...»²⁶:

Ուրեմն Յեղասպանությունը Օշականի մոտ «իբրև աղետալի փորձ, վախճան գրական մի ժամանակաշրջանի, սկիզբ գրական մի նոր միջավայրի ստեղծման, աղբյուր խեղաթյուրված գեղագիտական դատումի, և վերջապես աղբյուր ստեղծագործող մտքի ու բանաստեղծական երևակայության վրա բռնացած աղբումի» կայանում է հիմքը, ելակետը Սփյուռք ու սփյուռքահայ գրականություն հասկանցողության: Օշականը հավատում է, որ կարելի է աղետը վերապրել, աղետը գերազանցել: Եվ դա հնարավոր է գրականության մեջ, գրականության միջոցով: Նրա ստեղծագործ կյանքի գերագույն նպատակը դարձավ այն վեպը, որ պիտի պարագրեի Աղետը: Անգիջող պայքար տարավ կեղծիքի, միջակության ու անարվեստ ճիգերի դեմ: Գիտակից իր կոչումին, փնտռեց գտնելու աղետի poetics-ը «Ժանրը, լեզուն, ոճը, պատումը, տեմպը, դիտակետը», որ պիտի կարելի դարձներ վեպը, աղետի վեպը, որ պիտի ստեղծեր կապը վախճանի հետ, որ պիտի կազմեր սկիզբը նոր իմաստների, գրական արվեստի նոր գլուխգործոցների: «Մնացորդաց»-ը, որ այդ վեպը պիտի լիներ, անավարտ մնաց:

Ինչպես Բենիամին Թաշյանն է ասել «Օշական երևույթ մըն էր մեր գրականության մեջ»²⁷:

²⁵ Համապատկեր արևմտահայ գրականության, հ. VI, էջ 283:

²⁶ Վկայություն մը, էջ 28:

²⁷ Մայրիներուն շուրին տակ, էջ 118: